[redacted]

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 7 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի Գոհար Ազիզյանի դիմումը բավարարել՝ հաստատված համարելով «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատողներ Յասաման Մաթևոսյանի և Վալենտինա Մարությանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով, 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնների խախտման փաստերը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Յասաման Մաթևոսյանին և Վալենտինա Մարությանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրանց գործատուին՝ «Արմենիա հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին:

[redacted]

[redacted]

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողովին՝ այն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 25-րդ կետի համաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՈՒՆԻՑ՝

ՆԱԽԱԳԱՀ՝ **ԻԶԱԲԵԼ ԱԲԳԱՐՅԱՆ**